— Ես այժմ կատարելապէս տիրապետում եմ այդ լեզուին եւ կարդացել եմ շատ գրքեր: Մեծ աշխատութիւն էր պէտք, մինչեւ սովորեցի: Ես սկսեցի ծերութեան հասակում, բայց այդ դժուարին լեզուն լաւ սովորելու համար ամբողջ կեանք է հարկաւոր: Շէյխը մեծ համարում ունի դէպի իմ դպրութիւնը. հանդիսաւոր օրերում, երբ ինքը պէտք է քարոզ կարդայ, շատ անգամ ինձ է առաջարկում ամբիոն բարձրանալ:

— Ուրեմն դուք նրան օգնականի պաշտօ՞ն էք կատարում:

— Քրդերը ինձ ընդունում են որպէս նրա երկրորդականը, որպէս նրա փոխանորդը: Բայց ես այդ մասին շատ համեստ եմ: Ինձ համար չէ ոչ փառքը, ոչ աստիճանը. ինձ բաւական է այդ անշուք տաղաւարը, որի մէջ հոգեւոր մխիթարութիւն եմ գտնում:

Ես աչք ածեցի նրա տաղաւարի շուրջը. ամէն կողմում երեւում էր սաստիկ չքաւորութիւն: Այդ մարդը, որ այնքան համարում ունէր, որին այնքան հաւատում էին, կարող էր շրջապատել իրան ամէն տեսակ բաւականութիւններով, կարող էր հարստութիւն դիզել, բայց նա, որպէս վերեւում յիշեցի, իր ստացածը բաժանում էր աղքատներին եւ ինքը ապրում էր կատարեալ անձնուրացութեան մէջ: Նրա տաղաւարի միակ կարասին էր մի դդմասրոակ, որ գործ էր ածում որպէս ջրի աման: Այլեւս ոչինչ, չկար, բացի գրքերից: Յատակը ծածկուած էր հասիրով, որի վրայ ե՛ւ նստում էր, ե՛ւ քնում էր նա: Բայց ասում էին, որ նա խիստ հազիւ անգամ էր քնում:

Ներս մտաւ մեր առաջնորդներից մէկը, հարցրեց Ասլանից, թէ չէ՞ր կամենայ ուտելու մի բան պատոհրել: Այդ միջոցին տեղի ունեցաւ մի սրտաշարժ տեսարան. երբ երիտասարդի եւ ծերունու աչքերը հանդիպեցան միմեանց, երբ մի քանի վայրկեան ապշած, զարմացած նայեցին միմեանց վրայ, երկուսն էլ որպէս հայր եւ որդի, որոնք երկար ժամանակ միմեանց կորցրած են եղել, միմեանցից անջատուած են եղել, վազեցին, գրկեցին միմեանց եւ, մի քանի անհասկանալի հառաչանքներ արձակելով, մարեցան միմեանց կուրծքի վրայ:

— Քաւո՛ր Պետրոս... — ձայն տուեց երիտասարդը:

— Ա՛խ, Մուրադ... սիրելի Մուրադ... — լսելի եղաւ ծերունու դողդոջուն ձայնը:

Ես մնացել էի շոարած, չգիտէի ինչո՞վ բացատրել այդ հոգեզմայլութիւնը: Ինձ զարմացրեց առաւել այն, որ երկուսն էլ խօսեցին հայերէն լեզուով, քանի որ, մինչեւ երիտասարդի ներս մտնելը, «գուշակողը», քրդերի աբեղան, խօսում էր Ասլանի հետ քրդերէն լեզուով: